ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 9.

Այդ ամենին զուգընթաց՝ Հայոց ընդհանրական Հայրապետն էկումենիզմի էութիւնը մեկնաբանում է որպես հարաբերութիւն, ավելի ստույգ՝ սեփական ինքնության պահպանման դիրքերից հաւաբերություն այլ եկեղեցիների հետ: *Այս պարագայում եւս նրա ըմբռնումների համար մեկնակետային Աստծու Կամքն է եւ աստվածաշնչական պատգամը («Ձեզ կարգեցի, որ դուք գնաք եւ պտղաբեր լինեք, եւ ձեր պտուղը մնա...: Այս եմ ձեզ պատվիրում, որ սիրեք միմյանց (Հովհ. ԺԵ. 16–17)»: Եւ ընդհանրացնելով այդ ամենը՝ հավաստում է. «Որպես եկեղեցի՝ մեր քարոզչությունը պետք է լինի Քրիստոսի սիրո եւ կարեկցանքի դրսեւորման օրինակը: Այն խտրականություն կամ պայմաններ չպետք է դնի, այլ պետք է ողջունի բոլորին սիրո ոգով: Մենք չենք կարող երաշխավորել արդյունքը, որ այն ամբողջությամբ կբուժի մեր հասարակությունների վերքերը, բայց այն մեր հասարակություններին կօժտի այդ վերքերը բժշկելու հոգեւոր միջոցներով»*[1]:

Ահա թե ինչու հիմք ընդունելով միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիզմի էութիւնը կատարելապես բնութագրող այդ պատգամը՝ նա ընդհանրացնելով հռչակում է՝ «Մեր եկեղեցու առաքելության ճանապարհին մեծապես կարեւորում ենք նաեւ էկումենիկ ոգով սերտ հարաբերությունները *բոլոր* եկեղեցիների հետ *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)*»[2]: Ընդ

---

[1] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման առթիվ // «Էջմիածին», 2013, Ժ., էջ 14:*

[2] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա (2–6 հունիսի 2004 թ.) // «Էջմիածին», 2004, Զ., էջ 8: Այդ համապատկերում վեհափառը հավաստում է նաեւ. «Հայրապետական Մեր գահակալության առաջին տարում Մենք այցելություններ կատարեցինք մեր քույր եկեղեցիների հոգեւոր պետերին՝ հավաստելու Մեր եղբայրական սերը, ամրապնդելու մեր եկեղեցիների բարեկամությունը եւ արտահայտելու սերտ համագործակցության Հայ*

որում, նա պարզաբանում է նաեւ, որ. «Իր ազգային բնույթով հանդերձ՝ Հայ Եկեղեցին ջերմ ջատագովն է քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ համագործակցության, եւ Մենք մեր ժողովրդի հետ ուրախ ու մխիթարված ենք՝ տեսնելով, որ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» հիմքերի վրա օրավուր զորանում է քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ ոգին...»[3]: Վեհափառ Հայրապետը մեծապես արժեւորում է նաեւ քույր եկեղեցիների՝ էկումենիզմի եւ եկեղեցական գործակցության գնահատելի դրսեւորումները, եւ իբրեւ նման օրինակ վկայակոչում է Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյա հոբելյանի նկատմամբ դիրքորոշումը: Համաքրիստոնեական նշանակություն ունեցող այդ իրադարձության նկատմամբ վերոնշյալ վերաբերմունքը նա որակում է որպես «անշահախնդիր գործակցության իրական եւ ամբողջական դրսեւորում» եւ հավաստում է, որ համաքրիստոնեական այդ իրադարձությունը այն բացառիկ իրողություններից է, «...երբ քրիստոնյա աշխարհը, էկումենիկ շարժմանը մասնակից եկեղեցիներով, քրիստոնեական միության աղոթքի շաբաթն է ապրում՝ հայցելով Տիրոջ ողորմությունը մարդկության հաշտության համար...»[4]: Նա գոհունակությամբ է փաստում նաեւ, որ գործակցության նման վերաբերմունքով. «Մեր եկեղեցու տոնը վերածվեց համաքրիստոնեական ուրախության, քանզի ի Քրիստոս մեկ ընտանիքի անդամ-

---

եկեղեցու պատրաստակամությունը: Եղբայրական ողջույնով Մենք այցի ենք գնալու նաեւ այն քույր եկեղեցիներին, որոնց ժամանակի պատճառով չկարողացանք այցելել», 1700-ամյակի տոնակատարությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում // «Էջմիածին», 2001, Թ., էջ 37:

[3] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վիեննա // «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 32: Մեծապես կարեւորելով էկումենիզմի նման ըմբռնումը, Վեհափառը նաեւ հավելում է, որ Հայ եկեղեցին էկումենիզմի ոգու նկատմամբ ունեցել է եւ ունի իր անփոփոխ ու ավանդական մոտեցումը, որով շարունակում է առաջնորդվել նաեւ մեր օրերում եւ որ Հայ եկեղեցին միշտ էլ ցանկացել ու ձգտել է եղբայրական հարաբերություններ պահպանել բոլոր եկեղեցիների հետ, տե՛ս Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 451, 482: Եւ ջատագովելով աստվածային սիրո վրա հենված էկումենիկ գործելակերպը՝ հավելում է նաեւ. «Մենք աղոթում ենք, որ Աստծու ճշմարտության հոգին, սիրո եւ արդարության հոգին աշխարհի հետ լինի, Տերը օրհնի բարի կամքի, եղբայրության ու համագործակցության բոլոր ճանապարհները (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը ԱՄՆ հայոց Արեւմտյան Թեմ // «Էջմիածին», 2005, Զ., էջ 17:

[4] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 434:

ներ ենք՝ նույն առաքելությամբ, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւատոց» (Բ. Կորնթ. Դ. 13)»[5]։

Հայոց Հայրապետը նաեւ պնդում է, որ «Քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ ոգին» արմատապես մերժում է միատարրության ամեն մի ձգտում, հետեւաբար՝ նաեւ եկեղեցիների առկա տարբերությունների վերացման ցանկացած փորձ։ *Անվերապահ մերժելով միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունների նկատմամբ այդ եւ նման թյուրըմբռնումները՝ նա պարզաբանում է, որ իրական էկումենիզմը չի խաթարում եկեղեցիների ինքնությունը, չի ձգտում նրանց այլությունը վերածել գորշ միաձեւության եւ, բնականաբար, չի հանգում նաեւ եկեղեցիների միջեւ «սոսկական համաձայնության» ձեռք բերելուն։ Նա համոզված պնդում է, որ էկումենիզմի իրական ոգին արտահայտվում է «սէր յամենայնի» բանաձեւմամբ, քանի որ այդ ըմբռնումն է այն «իրական էկումենիկ ոգին եւ ջերմությունը», որը կոչված է «սիրով հարստացնել նաեւ ողջ աշխարհը», քանզի «Քրիստոս սիրով է շաղախում իր եկեղեցու ամեն մի քարը եւ կառուցում այն՝ Սուրբ Հոգու պարգեւած սիրո միջոցով մեզ միացնելով Իրեն՝ իբրեւ Իր մարմնի անդամներ։ Քրիստոս, որպես սիրո գերագույն օրինակ, միմյանց սիրել մեզ ավանդեց, Իր եկեղեցին հիմնեց որպես երկնային սիրո հարկ երկրի վրա, որպեսզի մարդկային ցեղի որդիներս որդեգրության շնորհով այդ մեծ տան Հոր զավակները լինենք։ Եւ եթե այդ ընտանիքի «մի որեւէ անդամ ցավ զգա, նրա հետ ցավ զգան բոլոր անդամները. եւ եթե մի անդամը փառավորվի, նրա հետ ուրախանան բոլոր անդամները (Ա. Կորնթ. ԺԲ. 26)»[6]։*

---

[5] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վիեննա // «Էջմիածին», 2001, ԺԱ.–ԺԱ., էջ 32։*

[6] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, Ե., էջ 22–23։ Մեկ անգամ եւս հավաստելով էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների նկատմամբ Հայ Եկեղեցու հաստատուն դիրքորոշումը՝ Վեհափառ Հայրապետը փաստում է. «Իր ազգային բնույթով հանդերձ՝ Հայ Եկեղեցին ջերմ ջատագովն է քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ համագործակցության, եւ Մենք մեր ժողովրդի հետ ուրախ ու մխիթարված ենք՝ տեսնելով, որ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» հիմքերի վրա օրավուր զորանում է քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ ոգին՝ ի խնդիր մարդկության առաջ ծառացած հիմնախնդիրների բարվոք վճռման եւ հանուն աշխարհի ապահով ու խաղաղ գալիքի», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վիեննա // «Էջմիածին», 2001, ԺԱ.–ԺԱ., էջ 32։*

էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերութիւնների այդօրինակ վավերագիր պետք է համարել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ. Պապի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի համատեղ հայտարարութիւնը, ուր մասնավորապես ասւում է. «Կաթողիկե եւ Հայոց եկեղեցիներն ունեն միմյանց հարգելու երկար մի փորձառություն, որպես միմյանց ամբողջացնող, ոչ թե հակասող նկատելով իրենց զանազան աստվածաբանական, ծիսական եւ օրինական ավանդույթները: ... Մեր հաստատ բաղձանքն է միմյանց հետ փոխանակված այս բազմաթիվ կերպերը եւ միմյանց միջեւ կայացած մոտեցումները բարելավված եւ հզորացած տեսնել (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[7]: Եւ մեկ անգամ եւս շեշտելով, որ միջեկեղեցական գործակցության ոլորտում քույր եկեղեցիները ավանդական բարեկամության ամուր հիմքեր ունեն, Գարեգին Բ. Կաթողիկոսը Հայաստան այցելած Հռոմի Պապին հավաստում է. «...բոլորը խանդավառ այն գիտակցությամբ, որ քրիստոնեական եկեղեցիները, իբրեւ անդամներ Քրիստոսի մեկ մարմնի, միասին են իրենց առաքելության մեջ»[8]:

Փաստական նյութի վերլուծությունը վկայում է, որ Հայոց Հայրապետը էկումենիկ եւ միջեկեղեցական երկխոսությունը իմաստավորում է մեկ այլ տեսանկյունից եւս, որում առաջնային է «հոգեւոր գործակցությունը»: Այդ կապակցությամբ նա կոչ է անում վեր կանգնել «անպտուղ բանավեճերից», որոնք լուրջ խոչընդոտ են իրական գործակցության եւ բնականոն հարաբերությունների ծավալման գործում եւ հավաստում է, որ նման վեճերը «միության ու համագործակցության ճանապարհի» արգելակներ են: Միանգամայն համոզված նա հիմնավորում է նաեւ, որ միջեկեղեցական եւ էկումենիկ գործընթացներում դավանաբանական տարբերություններն ամենեւին էլ խոչընդոտ չեն երկխոսություն հաստատելու գործում: Եւ այդ տեսակետը պարզաբանում է նրանով, որ. «...ի Քրիստոս մեկ ընտանիքի անդամներ ենք՝ նույն առաքելությամբ, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւատոյ (Բ. Կորնթ. Դ. 13)»[9]: Նա նաեւ պարզաբանում է, որ միության շարժում լինելով, էկումենիզմի հիմքում ընկած է աստվածաբանական այն համոզ-

---

[7] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Հռոմ եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքների վերադարձը Հայաստան // «Էջմիածին», 2000, ժԱ., էջ 11:*

[8] *Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդի այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին // «Էջմիածին», 2001, Թ., էջ 57:*

[9] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վիեննա // «Էջմիածին», 2001, ը.–ժԱ., էջ 32:*

մունքը, որ «Հավատի մեր մեկությունը այն կարեւորն է, որ առանձնահատկություններով հանդերձ, միավորում է մեր եկեղեցիները նույն առաքելության շուրջ եւ կոչում՝ գործել սիրով միաբան ու միասնաբար։ Փառք ենք բարձրացնում առ Աստված, որ օրավուր նոր քայլեր է անում քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ համագործակցությունը՝ զորացնելու համար փոխհասկացողության եւ համերաշխության ոգին Քրիստոսի Ընդհանրական եկեղեցուց ներս (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[10]։

Համոզված, որ էկումենիզմի իրական ոգին իսպառ բացառում է ցանկացած մրցակցություն, Հայոց Հայրապետի հայեցակարգում համակողմանի հիմնավորվում է նաեւ, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական գործակցության հիմքում պետք է ընկած լինի աստվածային սիրո վկայությունը, որովհետեւ. «Սիրո եւ փոխգործակցության պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որով զորանում է Քրիստոսի եկեղեցու հավաքական ուժը եւ բարոյական հեղինակությունը, որով ավելի զորավոր ու պտղաբեր պիտի լինի նաեւ քրիստոնեական եկեղեցիների մեկ առաքելությունը»[11]։ Նա նույնքան համոզված է, որ եկեղեցիները միայն համատեղ գործակցությամբ կարող են նպաստել հասարակական կյանքում տեղ գտած չարիքների հաղթահարման գործին, որ սիրով գործակցությամբ միայն Քրիստոսի եկեղեցին կարող է դառնալ «այդ չարիքների վերացման պայքարի ուղեկիցը»։ Այդ հիման վրա նա հավաստում է, որ արդի հասարակություններում, «քաղաքական ինչ-ինչ նկատառումներից» ելնելով, «համամարդկային արժեքներից դուրս է նետվում դրանց հոգեւոր, Աստվածատուր իմաստը», որոնց հետեւանքն է նաեւ բարոյականության անկումը, դաժանության ու բռնության անսքող դրսեւորումները, տկարի նկատմամբ անտարբերությունը, այսպես կոչված «զանգվածային մշակույթի» համատարած քայքայիչ ներխուժումը եւ այլն։ Եւ հասարա-

---

[10] Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս երկրորդի այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին // «Էջմիածին», 2001, Թ, էջ 73։

[11] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա (2–6 հունիսի 2004 թ.) // «Էջմիածին», 2004, Զ., էջ 9։ Այդ մոտեցումը պարզաբանելով՝ Վեհափառ Հայրապետը նաեւ երկնավորի զորակցությունն է հայցում «որ քրիստոնեական բոլոր եկեղեցիները առաջնորդի եղբայրական սիրո շավիղներով» եւ մաղթում է. «Թող էկումենիկ եղբայրասիրությամբ միշտ պայծառ լինի եւ մշտահունչ աղոթքով լեցուն» , տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում էկումենիկ արարողության ժամանակ // «Էջմիածին», 2001, Ծ.–ԺԱ., էջ 20–21։

կական կյանքին անհարիր այդ երեւույթները արմատախիլ անելը որակելով եկեղեցիների առջեւ կանգնած «վեհ նպատակ», նա պնդում է, որ այդ նպատակին հետամուտ՝ «...մենք պետք է մեր ոտքերը ամուր դնենք գետնին՝ նայելով մեր ժողովրդի աչքերի մեջ, խոսելով նրանց հետ Հիսուս Քրիստոսի անունից, գործելով նրանց մեջ Հիսուս Քրիստոսի ներկայության համոզումով»[12]։

Հարկ է նկատել, որ այս հարցում Վեհափառի մտքերի տրամաբանական ընթացքը միանգամայն հետեւողական է ու հատակ, քանի որ պատմականորեն բազմիցս է հաստատվել հակառակ մոտեցման հավակնությունների ու «փաստարկների» սնանկությունը։ Նա ամենեւին չի հերքում, որ գործակցող եկեղեցիները դավանական տարբերություններ ունեն, բայց միանգամայն համոզված է նաեւ, որ դրանք խոչընդոտ չեն եկեղեցիների հաղորդութենական իրական կապի համար։ *Նա վստահ է, որ մերօրյա միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունները «շրջանցում են այդ տարբերությունները», քանի որ նշված հարաբերությունների ոլորտում ներգրավված եկեղեցիները «հավատակից եղբայրների սիրո վկայությամբ» որդեգրում են հանուն Աստծու միասիրտ եւ միակամ գործակցությունը։ Դրա հիման վրա է կառուցված Վեհափառի հայեցակարգային այն պնդումը, որ. «Քրիստոնեական եկեղեցիների միասիրտ ու միակամ գործակցությամբ ու համատեղ ջանքերով, միահոգի աղոթքով պիտի բարձրացնենք հավատի հոգեւոր Տաճարը, որպեսզի այդ Սուրբ Խորանից ճառագող Փրկչական լույսը կենսահորդ ուժերով փարատի անգիտության խավարը մարդկային հոգիներում, առաջնորդի ատելությունից դեպի սեր, անհուսությունից՝ դեպի խոստումնալից գալիքի ու հարատեւ երջանիկ կյանքի օրհնալի հանգրվան»[13]։ Միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության հետեւողական այդ ըմբռնումը վերլուծաբանը մեկ անգամ եւս փաստում է հայ հավատացյալ հոտի եւ հոգեւոր դասի նախանձախնդրության եւ ջանասիրության օրինակով, ովքեր, նրա համոզմամբ, մշտապես հանդես են եկել անցյալից ժառանգություն ստացած «Հայ Եկեղեցու*

---

[12] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին // «Էջմիածին», 2013, ԺԱ., էջ 17։

[13] Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջինի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի եզրափակիչ տոնակատարություններին մասնակցելու համար // «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 13։

անկախությունը սրբությամբ պահպանելու» նախանձախնդիր դիրքորոշմամբ, ինչը թույլ է տալիս վստահորեն հավաստել նաեւ, որ Հայ եկեղեցին աստվածաշնորհ ազատության եւ անկախության այդ ընկալումով հարգում է *ոչ* եկեղեցիների համար նույնական թանկ եւ նույնական գնահատելի իմքնությունն ու առանձնահատկությունը[14]*։*

*Դա է պատճառը նաեւ, որ Աստվածաշնչական հիմնավորմամբ՝ Հայոց Հայրապետը իր պարտքն է համարում մեկ անգամ եւս հավաստել, որ եկեղեցու գործունեության անփոփոխ ուղենիշը «Աստվածային Սերն» է, եւ որ եկեղեցին «Սուրբ Հոգու պարգեւած սիրո միջոցով է ամբողջանում»։ Այդ հիման վրա նա եզրակացնում է նաեւ, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների էությունը կարելի է եւ պետք է արտահայտել «սիրո վրա հենված սրտակցություն» բանաձեւմամբ, որովհետեւ, պնդում է նա, երկնային ճշմարտությունները մարդկանց հայտնող գերագույն միջնորդ Աստված իր սիրով է ընդառաջ գալիս մարդկային տկարությանը։ Իսկ «Սրտակցության այսօրինակ սխրանքը հիմնված է սիրո վրա եւ մերժում է ամենայն հակառակություն եւ ատելություն, քանզի ամենասուրբ սերն է ընդհանրական սուրբ ընտանիքի ամուր պատվարը, Հորը եւ որդիներին միմյանց հետ կապող շաղախը»[15]։ Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է նաեւ, որ միջեկեղեցական հարաբերություններն ու էկումենիկ գործակցությունը պետք է ըմբռնել ոչ թե որպես «եկեղեցիների դավանական հակամարտությունները համահարթելու ճանապարհով միաձեւություն հաստատելու միտում», այլ՝ «սիրո ճանապարհով մասերի միավորմամբ քրիստոնեական ճշմարտությունների հաստատում» եւ «աստվածային սիրո վկայություն»։ Եւ անվարան բարձրաձայնում է, որ միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության էությունը պետք է հասկանալ որպես «Տնօրինական երկնային սիրո դրսեւորում», եւ որ միմիայն նման ըմբռնման պարագայում «…մենք հավատացողն ենք եկեղեցու իրական, խորհրդական միության *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)*»[16]։*

---

[14] *Տե՛ս* Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 485։*

[15] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 23։*

[16] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 485։*

Եւ ընդհանրացնելով էկումենիզմի եւ միջեկեղեցական համագործակցության էությունը պարզաբանող այդ ըմբռնումները, ինչպես նաեւ հիմք ընդունելով այդ ամենը պայմանավորող աստվածային պատգամների անվերապահ առաջնությունը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է. «Մենք հավատում ենք, որ քրիստոնեական եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկար ու հնարավորություններ են բացելու միասնաբար գործելու՝ հանուն ամենուր խաղաղության հաստատման, հանուն մի ավելի լավ աշխարհի կառուցման»[17]։ Եւ վերահաստատելով այս հարցում Հայ Եկեղեցու հանձնառությունը՝ վստահեցնում է, որ ներկա պայմաններում արդեն իսկ գոյություն ունեցող, հարուստ եւ բեղուն միջեկեղեցական երկխոսություններն ու էկումենիկ գործակցությունը, որպես համագործակցության նվիրաբերում, ծառայում եւ նպաստ են բերում Աստծու ժողովրդին՝ եկեղեցուն եւ նրա միջոցով՝ համայն մարդկությանը։

Էկումենիզմի նկատմամբ Վեհափառի հայեցակարգային մոտեցումները բնորոշող էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ քննարկվող հիմնահարցի ամբողջական պատկերը ներկայացնելու միտումով նա էկումենիկ հարաբերությունները գնահատում է նաեւ աստվածաբանական երկխոսությունների համապատկերում։ Այս հարցում նրա հավատամքն այն է, որ անհնար է իրական էկումենիկ համագործակցություն ծավալել, եթե հարաբերվող կողմերի համար լիովին ընկալելի չեն միմյանց աստվածաբանական ու դավանական տարբերությունները։ Առանց այդ էական գործոնների հաշվառման, կարծում է Հայոց Կաթողիկոսը, հնարավոր չէ համակողմանի հիմնավորված, ներքնապես ամբողջական ու կատարյալ գործակցության եւ հարաբերությունների ծավալումը։ Այդ պնդման հիմքը նրա հետեւյալ տեսակետն է. «Մեզանից յուրաքանչյուրը տարբեր է եւ յուրահատուկ, բայց մենք շիվերն ենք միեւնույն արմատի։ Մեզ միավորում են մեր ընդհանուր հավատքը առ Քրիստոս, մեր իրական սերը Աստծու հանդեպ։ Միության այս օրինակն է, որ էկումենիկ շարժման բոլոր մասնակիցները նախ եւ առաջ կոչված են ցուցաբերելու։ Մենք պետք է ձգտենք հոգեւոր միության, հա-

---

[17] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա (2–6 հունիսի 2004 թ.) // «Էջմիածին», 2004, Ջ., էջ 9։

վատքի եւ ծառայության միության, ողջ աշխարհում վկայության միության՝ հանուն Հիսուս Քրիստոսի եւ Նրա Ս. Եկեղեցու»[18]։

Եւ արժանի գնահատումով մոտենալով հենց այդ տեսակի համագործակցությանը՝ Վեհափառը կարծում է, որ միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության նմանօրինակ պարագա է այն, որ. «...Տիրոջ ամենախնամ Աջի օրհնությամբ կանգնել ենք այսօր կողք կողքի՝ վկայելու եւ զորացնելու մեր Եկեղեցիների եղբայրական սերը եւ համագործակցությունը եւ հավատարիմ Եկեղեցու Հայրերի ավանդին ու սուրբ ժառանգությանը՝ մեր տարբերություններով եւ առանձնահատկություններով հանդերձ առավելաբար կարեւորելու այն, ինչը մեզ միավորում է *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[19]։ Արժեքային այդ մոտեցումը Նորին Սրբությունը ծառայեցնում է նաեւ եկեղեցիների երկխոսության առանցքը կազմող «ծառայական վկայությունը» հիմնավորելու գործին։ Նա հավաստում է, որ չնայած եկեղեցիների միջեւ առկա տարբերություններին, միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության ոլորտում աստվածային սիրո. «...վկայությունը նշանակում է խոսել Քրիստոսի անունով եւ գործել Նրա ներկայությամբ՝ պարզասրտությամբ եւ առանց երկմտության։* Անշուշտ, մեր խոսքն ու գործը պետք է լինեն կշռադատված, սթափ եւ պատասխանատու, նույնիսկ՝ որոշ պարագաներում նրբազգաց։ *Այսուհանդերձ,* սահմանափակել կամ ստվերել մեր միության Սկզբնաղբյուրին, նշանակում է «բառնումի լույսը գրվանի տակ դնել»։ Դա նշանակում է թաքցնել լուսավորության միակ աղբյուրը, որը կարող է ճեղքել աշխարհի խավարը եւ հստակություն հաղորդել մարդկության տեսիլքին *(ընդգծումները մերն են՝ Ա. Ք.)»[20]։*

Տեղին է նաեւ նշել, որ այդ ամենով Ամենայն Հայոց Կաթողիկոսը էկումենիկ շարժման էությունը արժեւորում է նաեւ որպես Քրիստոսին պատկանելու զգացում եւ այդ զգացումից բխող հոգեւոր գործակցության ու կապերի ամրապնդում։ *Եւ միանգամայն տրամաբանական է, որ այդ հիման վրա նա «ճշմարիտ էկումենիզմի ոգի» է համարում եղբայրական սիրո վրա կառուցված եկեղեցական այնպիսի համագործակցությունը, որի առանցքը,*

---

[18] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին // «Էջմիածին», 2013, ժ., էջ 12։

[19] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 19։

[20] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին // «Էջմիածին», 2013, ժ., էջ 12–13։

Պողոս առաքյալի խոսքերով ասած՝ կազմում է եկեղեցիները համախմբող «միմյանց աջակից ու գործակից մեկ մարմնի անդամները լինելու» հոգենորոգ զգացումը[21]: Այդ հիման վրա նա նաեւ պարզաբանում է, որ միայն այդ ճանապարհով է իրական դառնում էկումենիզմի ճշմարիտ այն ոգին, որով «...հնարավոր պիտի լինի մեկտեղված ջանքերով արդյունավորել քրիստոնեական եկեղեցիների առաքելությունը ի հանդիման ներկա հրամայականների»[22]:

Գարեգին Բ. Կաթողիկոսի քննախույզ հայացքից չի վրիպել նաեւ չափազանց կարեւոր այն պարագան, որ որոշակի սահմաններում միջեկեղեցական եւ էկումենիկ գործակցության ոգին պայմանավորված է նաեւ հասարակական գործոններով, որոնց ազդեցությամբ՝ «Այսօր մեր ժամանակների արագընթաց զարգացումների մեջ հրատապ են ծնունդ առնող բնապահպանական, ընկերային, տնտեսական, բարոյական բազմապիսի հարցերը, աշխարհայնացման ընթացքները, երբ նվազում է ճշմարիտ հարգանքը մարդու հանդեպ, սերը՝ Աստծու հանդեպ»[23]: Եւ քանի որ, նրա համոզմամբ, այդ հարցերում «այլ է Աստծու կամքը», նա հիմնավորում է նաեւ, որ Տնօրինական կամքի իրագործումով. «Քրիստոնեական մեր եղբայրությունը զորացնում է մեզ եւ միավորում՝ հաղթահարելու համար արդի ժամանակների ընդհանուր մարտահրավերները: Ներկա ճգնաժամային գործընթացների պայմաններում, երբ մարդիկ ավելի հեշտությամբ են հեռանում Արարչից, մենք՝ քրիստոնյաներս, առավել եւս պարտավորված պետք է զգանք բերելու հավատի մեր վկայությունն ու միասնաբար պատասխաններ գտնելու մարդկության առջեւ ծառացած խնդիրներին»[24]:

Այդ հիման վրա Վեհափառի հայեցակարգում մատնանշվում է նաեւ, որ միջեկեղեցական հարաբերությունները եւ էկումենիկ գործակցությունը հրատապ առաջնահերթություն է, քանզի. «...դեռեւս բազմաթիվ չլուծված խնդիրներ կան մեր առջեւ: Հակառակ ձեռքբերումներին՝ կա-

---

[21] Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն // «Էջմիածին», 2004, Զ., էջ 18:

[22] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկա // «Էջմիածին», 2004, Ե., էջ 9:

[23] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, Ե., էջ 19:

[24] Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցու Արքեպիսկոպոս Յուկկա Պաարման Մայր Աթոռ Ս. Էջմիածնում // «Էջմիածին», 2002, Հ., էջ 7:

րիք ունենք էլ ավելի համատեղելու մեր ուժերը՝ ժամանակակից կյանքի եւ աշխարհայնության մարտահրավերները համատեղ վկայությամբ դիմագրավելու համար»[25]: Եւ կոչ է անում հանուն միասնության ու համերաշխության հաստատման ապրել «խաղաղ, ստեղծագործ եւ արարումի կյանքով, Սուրբ Հոգուց մեզ տրված շնորհներով, Քրիստոսի սիրով եւ ավետարանական պատգամներով»: Մատնանշելով, որ աշխարհի զանազան մասերում մարդիկ՝ «մեր քույրերն ու եղբայրները տառապանքի ու կարիքի մեջ են», որ «տարածաշրջանային վեճերը, փոխադարձ հոգեւոր, մշակութային եւ բարոյական արժեքների ու իրավունքների ոտնահարմամբ կրոնական ծայրահեղականությամբ արտահայտված զինված բախումները եւ աճող բռնություննները ցավ են պատճառում ամենքիս», նա հավելում է, որ արդի բնական եւ հասարակական մարտահրավերները. «...այլընտրանք չեն թողնում եկեղեցիների համերաշխ գործակցությանը՝ ի սեր ավելի լավ աշխարհ կերտելու մեր առաքելության իրագործման»[26] եւ հիմնավորված պնդում է նաեւ, որ վերոնշյալ մարտահրավերներին դիմադարձ կանգնելու համապատկերում եւս՝ «Միջեկեղեցական հարաբերությունները հրամայական են մեզ համար»[27]:

Այդ համապատկերում Գարեգին Բ. Կաթողիկոսը միջեկեղեցական եւ էկումենիկ գործակցության առաջնությունը շեշտադրում է նաեւ փոխադարձության համապատկերում եւ հավաստում է. «Վստահ ենք, որ փոխայցելությունների ու շփումների շարունակականությունը նոր ու խոստումնալից հեռանկար է բացելու մեր առջեւ, որպեսզի մենք՝ իբրեւ եկեղեցիներ, մեր ընդհանրությունների շեշտադրման ճանապարհով ընդառաջ ելնենք ժամանակի մարտահրավերներին»[28]: Եւ մատնանշելով, որ

---

[25] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57:*

[26] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 23: Այդ մարտահրավերների շարքում Վեհափառը եկեղեցիների առջեւ կանգնած հրատապ խնդիրներից է համարում նաեւ. «...շրջակա միջավայրի պահպանության խնդիրները, արագընթաց աճ ունեցող ժամանակակից տնտեսական հարաբերություններում արդարության եւ համահավասար զարգացման հրամայականը», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57:*

[27] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57:*

[28] *1700-ամյակի տոնակատարությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում // «Էջմիածին», 2001, Թ., էջ 40:*

հասարակական գործոններով պայմանավորված՝ «անհանդուրժողությունը, առճակատումները, հասարակական եւ տնտեսական անհավասարությունը մարդկությանը շատ տառապանքներ են պատճառել», մեկ անգամ եւս պնդում է հասարակական այդ չարիքները հաղթահարելու հրամայականը եւ հավաստում է. «Մեր Տերը նույնպես հստակեցրեց, որ աղքատության խնդրի եւ մարդկային բոլոր ախտերի ապաքինումը պետք է բխի հենց Քրիստոսի անձից, Քրիստոսի իշխանության մեր ճանաչումից, Նրա զոհաբերության եւ Հարության երախտապարտ ընդունումից եւ Նրա «հետեւիր ինձ» սիրալիր հրավերին՝ մեր ողջ սրտով արձագանքումից: Այս հասկացությամբ մեր Տերը հաստատեց Եկեղեցին՝ լինելու միջոցը Քրիստոսի մերձավորության այս աշխարհում»[29]:

Միաժամանակ, հասարակական կյանքում տեղ գտած բացասական վերոնշյալ երեւույթների հաղթահարման գործում առաջնային համարելով քրիստոնեական արժեքները՝ նա պարզաբանում է նաեւ. «Այսօր աշխարհի ամենամեծ խնդիրներից գերագույնը նախ եւ առաջ մարդու հեռանալն է Աստծուց, հաճախ կամավոր հեռանալը, հպարտ դիմադրությունը սիրող եւ արդար Դերագույն էակի գաղափարի հանդեպ: Այս դիմադրությունը եւ հեռացումն Աստծուց ոչ այլ ինչ է, քան թողտվություն՝ արհամարհելու մարդու իրավունքը եւ ընդունելի համարելու նպատակին հասնելու ցանկացած միջոց»[30]: Եւ քանի որ նրա համար աներկբա է, որ հասարակական կյանքը բարենորոգ դարձնելու ուղին արտահայտված է «Եկեղեցու ինքնության» տեսքով՝ որպես մարդկության պատմության զարգացման ընթացքում ամենամարդասիրական կառույց, հռչակում է. «Մնայուն արժեքները... քրիստոնեության 2000 տարվա պատմության պտուղներն են: Նրանք այն ժառանգության մասն են, որը մենք, որպես Եկեղեցի, ժառանգել ենք: Դրանց խթանումը մարդ-

---

[29] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին // «Էջմիածին», 2013, Ժ., էջ 13:*

[30] *Անդ: Այդ համապատկերում Վեհափառը պարզաբանում է նաեւ. «Չկարծենք, թե Աստծուն մերժելը միայն 20-րդ դարի արդյունքն է, երբ արագորեն բազմապատկվեցին գիտական մտքի հայտնագործությունները: Մարդկային պատմության մեջ շատ է եղել, երբ հավատքը ընդունվել է իբրեւ նախապաշարում: Մարդը փորձել է երջանիկ լինել իր մտքի ձեռքբերումներով եւ միշտ կանգնել է փակուղու առջեւ, քանզի առանց հոգու կենդանության, որը խորանն է Աստծու, չի կարող լինել ճշմարիտ երջանկություն, եւ առանց Աստծու ներկայության չկա իրական առաջընթաց», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն // «Էջմիածին», 2004, Զ., էջ 25:*

կային հասարակության մեջ այն առաքելության մասն է, որին մենք կոչված ենք: Մենք պետք է իրականացնենք այդ առաքելությունը մեծագույն խոնարհությամբ: Բայց մենք նաեւ պետք է մեծապես վստահ լինենք, որ մարդկային այդ արժեքները միշտ գտել են իրենց ամենաբարձր դրսեւորումները ի Քրիստոս Հիսուս եւ Նրա հիմնադրած շարժման մեջ»[31]:

Պետք է փաստել նաեւ, որ հասարակական կյանքը բարօր դարձնելու գործընթացներում Վեհափառի հայեցակարգում մեծապես կարեւորվում է ինչպես հասարակական, այնպես էլ պատմականորեն խաղաղության կերտողի դեր ստանձնած՝ «...Քրիստոնեական Եկեղեցիների առավել համախմբված եւ ջանադիր գործակցությունը, քանզի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ընդգրկուն համագործակցությամբ միայն ի վիճակի պիտի լինի ավելի մեծ կարողականությամբ ծառայելու աշխարհում խաղաղության հաստատմանը, մարդու եւ ազգերի, ընտանիքների, սոցիալապես խոցելի եւ անապահով խավերի իրավունքների պաշտպանությանը, ավետարանական արժեքներով կյանքի վերափոխմանը՝ ի սեր բարօր եւ երջանիկ աշխարհի կառուցման»[32]: Հայոց Կաթողիկոսի մոտեցումները նույնքան հետեւողական են նաեւ «խաղաղության արժեքի մասին» եկեղեցու դերի գնահատման հարցում: Վկայությունը Հայրապետի հետեւյալ տողերն են. «Խաղաղությունը մեր աշխարհում դեռ մնում է որպես երեւակայական իրողություն: Մենք հավատում ենք, որ այս իրողությունը ԻԱ. դարի ամենաահավոր եւ ապաբարոյական անակնկալն է: Քրիստոնեական Գ. հազարամյակի համար մենք բոլորս ունեցել ենք ավելի դրական, ավելի հուսալի ակնկալիքներ աշխարհից, քան այն, ինչ մենք հիմա տեսնում ենք մեր

---

[31] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին // «Էջմիածին», 2013, ժ., էջ 16–17:

[32] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 19: Փաստերը վկայում են, որ Վեհափառը համոզված է այդ ոգով կառուցված էկումենիկ հարաբերությունների արդյունավետության մեջ: Վկայությունը ԱՄՆ-ում հայ եւ քույր եկեղեցիների հոգեւորականների մասնակցությամբ հանդիպմանը նրա հետեւյալ խոսքերն են. «Աղոթական հարատեւ ջանքերի եւ տքնաջան աշխատանքի արդյունքն է, որ այսօր ապրում ենք միասին անթաքույց սիրով լի Մեր եղբայրությունը: Մաքառումների եւ ամուր կամքի դրսեւորման շնորհիվ հաղթահարեցինք շատ պատնեշներ, որոնք բաժան էին հանդիսանում եկեղեցիների, երկրների ու քաղաքակրթությունների միջեւ (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57:

շուրջը»[33]: Եւ համոզված, որ Եկեղեցին իր ծանրակշիռ խոսքն ունի ասելու այդ հարցում եւս, նա հավաստում է. «Մենք աղօթող ենք, որպեսզի Տերը միշտ սիրո մեջ պահի ազգությունները եւ Եկեղեցիները բոլոր, որպեսզի համատեղ ջանքերով օրհնյալ դարձնեն ազգերի կյանքը այս երկրի վրա: Ապահովեն խաղաղ, անվրդով կյանքի օրեր բոլոր ժողովուրդներին, որպեսզի մարդիկ ապրեն՝ իրենց ստեղծագործ աշխատանքի բարի վաստակը վայելելով եւ օրհնելով միշտ Աստծուն այն բոլոր բարիքների համար, որ Տերը պարգեւում է մեզ՝ արարածներիս»[34]:

*Ընդհանրացնելով այդ ամենը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հանրագումարելով փաստում է, որ Հայ Եկեղեցու համար առավել հոգեհարազատ է միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության խաղաղարար եւ փոխվստահության ոգին, քանի որ այն բացառում է հոգեւոր եւ հասարակական գործոնները միմյանց հակադրելու արատավոր մոտեցումները եւ, միաժամանակ հարգանքով է մոտենում այդ հարցում քույր եկեղեցիների ըմբռնումներին: Եւ քանի որ այդ տեսակետը հավասարապես մերժում է նաեւ հակադիր մոտեցումների անորոշ ու կասկածելի «վերլուծական հաստատումների» հավակնությունները, վեհափառը հավաստում է. «Այս ըմբռնումը բխում է մեր Եկեղեցու սրբազան ավանդությունից ու մեր ժողովրդի պատմական փորձառությունից: Այս ոգով են կառուցվել մեր հարաբերությունները Քույր Եկեղեցիների հետ: ...Մեր վկայության դաշտը էկումենիկ հարաբերություններն են, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսից նշանավորվեցին ձեռքբերումներով միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերություններում՝ հիմնված միմյանց տարբերություններն ընդունելու եւ հարգելու, միմյանց ճանաչելու, եղբայրական սիրով միմյանց օժանդակելու ու նեցուկ կանգնելու սկզբունքներին *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)*»[35]:*

Համոզված, որ Տիրավանդ սիրո ուղին այսօր բարի պտուղներ է պարգեւում էկումենիկ շարժման մեջ եւ բարեկամության կամուրջներ է ձգում տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջեւ, Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը իրավահավասար այդ հարաբերությունների ծավալումը

---

[33] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղօթքին // «Էջմիածին», 2013, Ժ., էջ 15:

[34] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմ // «Էջմիածին», 2005, Զ., էջ 46:

[35] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Կ. Պոլիս // «Էջմիածին», 2006, Զ., էջ 15:

կարեւորում է նաեւ միջեկեղեցական հարաբերությունների համապատկերում, քանի որ համոզված է, որ. «Բազմաթիվ են հնարավորություններն այսօր ավելի զարկ տալու փոխադարձ մեր հարաբերություններին եւ համատեղ վկայելու Մեր ժառանգած աստվածատուր պարգեւները, ընթանալու միության տիրավանդ ճանապարհով»: Ահա թե ինչու հերթական անգամ նա հավաստում է այն իրողությունը, թե՝ «Հրամայական է Քրիստոնեական եկեղեցիների առավել համախմբված եւ ջանադիր գործակցությունը, քանզի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ընդգրկուն համագործակցությամբ միայն ի վիճակի պիտի լինի ավելի մեծ կարողականությամբ ծառայելու աշխարհում խաղաղության հաստատմանը, մարդու եւ ազգերի, ընտանիքների, սոցիալապես խոցելի եւ անապահով խավերի իրավունքների պաշտպանությանը, ավետարանական արժեքներով կյանքի վերափոխմանը՝ ի սեր բարօր եւ երջանիկ աշխարհի կառուցման»[36]:

Այս հարցում Հայ Եկեղեցու ընդհանրական մոտեցումն այն է, հավաստում է Վեհափառը, որ էկումենիկ գործակցությունը եւ միջեկեղեցական հարաբերությունները հնարավոր եւ իրական են դարձնում ազատ եւ անկեղծ արտահայտվել այդ հարցերում: Եւ հավելում է, որ հանուն այդ նպատակի է Հայ Եկեղեցին նպատակասլաց կերպով հանդես գալիս միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերություններում եւ իր գործուն մասնակցությունն է բերում բարոյական եւ հոգեւոր այն առաքելությանը, որն արտահայտվում է աշխարհում քրիստոնեական ճշմարիտ եկեղեցիների կենդանի վկայությամբ: «Մենք փոքր ազգ ենք,– վավերագրում է Վեհափառն այդ կապակցությամբ,– սակայն եկեղեցական հարաբերություններում մեր կեցվածքը բնորոշ է զորավոր եկեղեցիներին եւ զորավոր ազգերին: Փոքր ազգերին բնորոշ է ամփոփված մնալը՝ պահելու համար իրենց արժեքները, իրենց ավանդությունները եւ պահպանելու իրենք իրենց, որից, սակայն, չեն վախենում ո՛չ մեր Եկեղեցին եւ ո՛չ էլ մեր ազգը: Մեր կյանքն ու գործունեությունը բնորոշ է մեծ եւ զորավոր ուժեր ունեցող ազգերին: Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդեպ մեր ունեցած հավատից»[37]:

Նա միաժամանակ նաեւ զգուշացնում է հնարավոր բացասական հետեւանքներից, քանի որ համոզված է, որ եկեղեցական ծառայության

---

[36] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 19:

[37] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 54:

ոլորտում հոգեւոր եւ հասարակական գործոնների հակադրությունը կամ աններդաշնակությունը կարող է անխուսափելիորեն հանգեցնել նորանոր շերտավորումների, ինչպիսիք են. «...այսպես կոչված «զանգվածային մշակույթի» համատարած քայքայիչ ներխուժումը, գլոբալիզացիայի այն բացասական արտահայտությունները, որ փաստորեն հանգեցնում են հասարակական կյանքում հոգեւոր-ազգային արժեքների ստորադասմանը»[38]: Ահա այդ համապատկերում է, փաստում է Հայոց Կաթողիկոսը, որ առաջնային նշանակություն է ձեռք բերում հոգեւոր եւ հասարակական գործոնների միջեւ «ներդաշնակ համակեցություն» հաստատելու հրամայականը: Իսկ նշված գործընթացներում, անկասկած, անուրանալի է նաեւ եկեղեցու դերակատարությունը, քանի որ էկումենիկ եւ միջեկեղեցական գործակցությունը իր՝ «...հավատավոր զավակների միջոցով ծառայում եւ նպաստ է բերում մարդկության եւ մեր ժողովուրդների առջեւ ծառացած եւ համաշխարհային հանրության հուզող ժամանակի մարտահրավերների հաղթահարմանը»[39]: Վերոնշյալից աներկբա է նաեւ, եզրակացնում է Վեհափառը, որ միջեկեղեցական եւ էկումենիկ համագործակցության ոլորտում. «Քրիստոսով սիրո եւ եղբայրության մեջ չպետք է տեղ գտնեն անհանդուրժողությունն ու առճակատումները, որ մարդկությանը շատ տառապանքներ են պատճառել: Այսօր էլ անհանդուրժողությունն ու առճակատումները փորձության մեջ են պահում աստվածային արարչագործությունը՝ մարդկանց եւ մեզ շրջապատող աշխարհը միջկրոնական անհամաձայնությամբ, պատերազմներով ու ահաբեկչություններով, անտարբերության դրսեւորումներով եւ աղքատության ու տարաբնույթ աղետների հետեւանքներով: ...Այս չէ կամքն Աստծու: Այս չէ կոչումը մեր: Բոլորիս ձգտումն է խաղաղ, ստեղծագործ եւ արարումի կյանքով ապրելը՝ Սուրբ Հոգուց մեզ տրված շնորհները Քրիստոսի սիրով եւ ավետարանական պատգամներով ծառայեցնելը միասնության եւ համերաշխության հաստատման համար՝ քանզի «ովքեր սիրում են Աստծուն, ամեն ինչում գործակից են լինում բարիքի համար» (Հռոմ. Ը. 28)»[40]:

---

[38] *Գարեգին Բ. Կաթողիկոսը ներկա գտնվեց ուղղափառ խորհրդարանականների միջազգային կոնֆերանսի բացմանը // «Էջմիածին», 2001, Բ.–Գ., էջ 13:*

[39] *Միջխորհրդարանական Ուղղափառության վեհաժողովի գերագույն ասամբլեան Աթենքում // «Էջմիածին», 2013, է., էջ 150:*

[40] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, ե., էջ 6:*

Եւս մեկ քայլ անելով, Գարեգին Բ. Հայրապետը միջեկեղեցական եւ էկումենիկ գործընթացների համակարգում կարեւոր իրադարձություն է համարում նաեւ քրիստոնեական սիրո եւ փոխադարձ հարգանքի վրա խարսխված հանդուրժողականության եւ համագործակցության դերը։ Այդ փաստը նա վկայում է հետեւյալ պնդմամբ. «Թող անխախտ լինի ու բարի արգասիքներ տա եղբայրական սերը հավատակից քրիստոնյա Եկեղեցիների՝ ի փառս Աստծու Ամենակալին եւ հուրախություն համայն հավատացելոց»[41]։ Եւ լինելով միջեկեղեցական ու էկումենիկ համագործակցության ջատագովը՝ նա միաժամանակ հավաստում է. «Հայ Եկեղեցին ողջունում է քրիստոնեական Եկեղեցիների երկխոսությունն ու սերտ համագործակցությունը՝ ի սեր Քրիստոսի Եկեղեցու, ի սեր իր հոտի, հանուն աշխարհի խաղաղության ու մարդկանց համերաշխության»[42]։ Այդ համապատկերում անհնար է չնկատել, որ այդ մոտեցումն առավել արդիական հնչեղություն է ձեռք բերում կրոն-հասարակություն փոխադարձ առնչությունների զարգացման ապագայաբանական մտակառույցների համապատկերում։ Ահա թե ինչու այդ ամենի ընդհանրացմամբ Հայոց ընդհանրական Կաթողիկոսը պնդում է. «Միջեկեղեցական հարաբերությունները հրամայական են Մեզ համար։ Հայ Եկեղեցին, հանդուրժողականության եւ համագործակցության սիրո ոգով առլեցուն, fույր եկեղեցիների հետ գործակցելու եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ խաղաղ համակեցության իր հիմնավուրց եւ հարուստ ավանդությամբ շարունակելու է ներդրում ունենալ միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններում՝ զարկ տալով երկխոսությանն ու եղբայրությանը, *քանզի սիրո եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները վստահություն են ծնում, վերացնում են վախի եւ կասկածի զգացումները՝ մարդկանց մղելով հաշտության, անկեղծ եւ կառուցողական համագործակցության (ընդգծումները մերն են՝ Ա. Ք.)»[43]։*

Միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ գործակցության մասին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի ընդհանրական մոտեցումներն անհնար է ամբողջապես գնահատել, եթե հայեցակարգային լուծումնե-

---

[41] Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս երկրորդի այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին // «Էջմիածին», 2001, Թ., էջ 61։

[42] Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցու Արքեպիսկոպոս Յուկկա Պաարման Մայր Աթոռ Ս. Էջմիածնում // «Էջմիածին», 2002, Ը., էջ 7։

[43] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ // «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57։

րին զուգընթաց անդրադառն չկատարվի նաեւ նրա էկումենիկ գործունեությանը: *Ինքնին հասկանալի է, որ այս հարցն ամբողջությամբ ներկայացնելը չափազանց դժվար է: Բանն այն է, որ Վեհափառի էկումենիկ գործունեությունն ամբողջական ներկայացնելու պարագային պետք է նկատի ունենալ անառարկելի այն փաստը, որ. «Անհնար է Հայ Եկեղեցում տեղի ունեցող ցանկացած միջեկեղեցական-էկումենիկ գործունեություն առանձնացնել եւ առանձին դիտել Վեհափառի անձից, կամ Վեհափառի գործունեությունն առանձնացնել Հայ Եկեղեցում տեղի ունեցող միջեկեղեցական իրադարձություններից: Այս ամենը փոխշաղկապված են: Սա Հայ Եկեղեցու դարավոր ավանդությունն է եւ ունի իր պատմական հիմքն ու շարունակությունը»*[44]*: Այդ պատճառով էլ կանդրադառնանք միայն Հայոց Հայրապետի էկումենիկ գործունեության մի քանի դրվագների՝ քույր եկեղեցիներ այցերի եւ համատեղ հռչակագրերի եւ հայտարարությունների ընդունմանը, սփյուռքահայ թեմեր հայրապետական այցերի ընթացքում էկումենիկ արարողություններին մասնակցությանը, Հայրապետի արտոնությամբ Միջազգային տարբեր կառույցների (Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ, Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանս, Ուղղափառության Միջխորհրդարանական կառույց եւ այլն) եւ դրանց տարբեր հանձնաժողովների ու հանձնախմբերի աշխատանքներին Հայ Եկեղեցու մասնակցությանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եկեղեցական տարբեր պատվիրակությունների ընդունմանը եւ երկխոսությանը, Կաթոլիկ, Ուղղափառ եւ Անգլիկան Եկեղեցիների հետ աստվածաբանական երկխոսությունների ծավալմանը եւ այլն:*

Այդ համապատկերում բնութագրական է իր միջեկեղեցական եւ էկումենիկ գործունեության մասին Հայոց Հայրապետի հետեւյալ հավաստումը. «Օրհնյալ է Աստված, որ Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան հոբելյանական 2000 թվականին, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր գահակալության առաջին տարում առաջնորդեց Մեր ֆայլերը դեպի ֆրիստոնեական ֆույր եկեղեցիներ՝ ողջագուրումի, Մեր հոգեւոր եղբայրների հետ հաստատելու եւ զորացնելու մեր եկեղեցիների դարավոր ամուր կապերն ու համագործակցությունը *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»*[45]*:*

---

[44] *Հովակիմ աբեղա Մանուկյան, Մայր Աթոռի միջեկեղեցական գործունեությունը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում // «Էջմիածին», 2004, ԺԱ.–ԺԲ., էջ 129:*

[45] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Հռոմ եւ Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքների վերադարձը Հայաստան // «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 13:*

Այդ հոլովույթում, անշուշտ, կարեւորագույն իրադարձությունների շարքում պետք է թվարկել այն, որ հովվապետական այցերի եւ եկեղեցական առաջնորդների հրավերով Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը էկումենիկ հանդիպումներ է ունեցել *Ռումին Ուղղափառ Եկեղեցու Թեոկտիստ Պատրիարքի*[46], *Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Հովվապետ Շենուդա Գ. Պատրիարքի*[47], *Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Հույն Եկեղեցու Պապ եւ Պատրիարք Պետրոս Է.-ի*[48], *Եթովպիայի Թեւահեդո Եկեղեցու Աբունա Պաւլոս Պատրիարքի*[49], *Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Ալեքսի Բ.*[50] *եւ Կիրիլ Պատրիարքների*[51], *Կաթոլիկ Եկեղեցու Հովհաննես-Պողոս Բ.*[52],

---

[46] *Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Ռումինիա // «Էջմիածին», 2000, Թ., էջ 12–17: Նման հանդիպումներ են կայացել նաեւ Ռումին Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Դանիել պատրիարքի, տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը Ռումինիա եւ Մոլդովա // «Էջմիածին», 2008, ԺԱ., էջ 7–8, ինչպես նաեւ Պատրիարքական փոխանորդ Զիպրիան եպս. Կամպինյաուի հետ, տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը Ռումինիայի եւ Ուկրաինայի հայոց թեմեր // «Էջմիածին», 2012, Ը., էջ 5:*

[47] *Մանրամասները տե՛ս Վեհափառ Հայրապետի այցելությունը Եգիպտոս եւ Եթովպիա // «Էջմիածին», 2000, Ժ., էջ 3, 4–7, 10, 14: Մեկ այլ հանդիպման մասին տե՛ս Ալեքսանդրիայի Պապ եւ Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ.-ի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին // «Էջմիածին», 2003, Ե., էջ 3–11:*

[48] *Մանրամասները տե՛ս Վեհափառ Հայրապետի այցելությունը Եգիպտոս եւ Եթովպիա // «Էջմիածին», 2000, Ժ., էջ 10:*

[49] *Մանրամասները տե՛ս անդ, էջ 18–24:*

[50] *Մանրամասները տե՛ս Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա // «Էջմիածին», 2000, Բ., էջ 20, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Մոսկվա // «Էջմիածին», 2000, Գ., էջ 3–19, Տեղեկագրություն Վեհափառ Հայրապետի Հռոմ եւ Մոսկվա այցելությունների մասին // «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 3, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Համայն Ռուսաց Պատրիարքի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի հետ եռակողմ հանդիպումում // «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 19–20, Գարեգին Բ. Կաթողիկոսը պաշտոնական այցելությամբ մեկնեց եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պաշտոնատեղի՝ Ժնեւ // «Էջմիածին», 2001, Բ.–Գ., էջ 14, Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդների հանդիպումը (26 նոյեմբերի 2003 թ., Մոսկվա) // «Էջմիածին», 2003, Ժ.–ԺԱ., էջ 18–24 եւ այլն:*

[51] *Մանրամասները տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա // Էջմիածին», 2009, Է., էջ 140–141, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մոսկվայի Սուրբ Պայծառակերպության նորակառույց եկեղեցու օծման առիթով // Էջմիածին», 2013, Թ., էջ 48, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքի հետ հանդիպման առիթով // Էջմիածին», 2019, Դ., էջ 11:*

[52] *Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Հռոմ եւ Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքների վերադարձը Հայաստան // «Էջմիածին», 2000, ԺԱ.,*

Բենեդիկտոս ԺԶ.[53] եւ Ֆրանցիսկոս Ա. Պապերի[54], Վրաց Ուղղափառ Եկեղեցու Իլիա Բ. Պատրիարք-Կաթողիկոսի[55], Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ եւ Սոֆիայի մետրոպոլիտ Մաքսիմ Պատրիարքի[56], Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի եւ Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոս Լեոյի[57], Անգլիական Եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռուան Վիլյամսի[58],

---

էջ 6, 12–13, Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդի այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին // «Էջմիածին», 2001, Թ., էջ 53–82։

[53] Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, Ե., էջ 4–8, 18–21։ Հանդիպման ընթացքում Գարեգին Բ. Վեհափառը երկու «եկեղեցիների միջեւ սիրո ոգու դրսեւորում» եւ «եղբայրական ազնիվ վերաբերմունքի արտահայտություն է համարել» Բենեդիկտոս ԺԶ. պապի կողմից «եկեղեցու Առաքելապատիվ Հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանի կանգնեցումը, Պապի նախագահությամբ մեծ սրբի անունով հրապարակի անվանակոչումը Վատիկանում, ինչպես նաեւ Հռոմի հայ համայնքին Սուրբ Վլաս եկեղեցու տրամադրումը, որը աղոթատուն է եղել հայ ուխտավորների», տե՛ս անդ, էջ 19։

[54] Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը հընթացս Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ, Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ հանդիպման // «Էջմիածին», 2014, Ե., էջ 7–10, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առթիվ Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված Պատարագի ընթացքում (12 ապրիլ, 2015 թ., Սուրբ Պետրոսի տաճար, Հռոմ) // «Էջմիածին», 2015, Դ., էջ 20–22, Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Ա. Պապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2016, Զ., էջ 5–27։

[55] Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Վրաստան // «Էջմիածին», 2000, Ե., էջ 4–10, 14–20, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական-միջեկեղեցական այցը Վրաստան // «Էջմիածին», 2011, Զ., էջ 5–7, 9–14։

[56] Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա եւ Բուլղարահայոց թեմ //«Էջմիածին», 2002, Զ.–Է., էջ 4–17։

[57] Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա // «Էջմիածին», 2004, Զ., էջ էջ 3–10։ Ֆինլանդիայի եւ Տուրկուի Արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի եւ Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու Արքեպիսկոպոս Լեոյի հետ նոր հանդիպում է եղել 2017 թ., մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական այցելությունը Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական եւ Օրթոդոքս եկեղեցիների նվիրապետերին // «Էջմիածին», 2017, Գ., էջ 5–13։

[58] Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն // «Էջմիածին», 2004, Զ., էջ 11–21։ Կողմերը հանդիպել են նաեւ 2008 թ. Վատիկանում, տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական այցելությունը Վատիկան եւ Իտալիայի հայ համայնքին // «Էջմիածին», 2008, Ե., էջ 23–24։

Կոստանդնուպոլսի Բարդուղիմեոս Ա. Տիեզերական պատրիաքի[59], Հնդիկ Մալանկարա Ուղղափառ եկեղեցու պետ Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա.-ի[60] եւ այլ նվիրապետերի հետ։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[59] Մանրամասները տե՛ս Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջինի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի եզրափակիչ տոնակատարություններին մասնակցելու համար // «Էջմիածին», 2001, ժ.–ԺԱ., էջ 5–24, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի այցելությունը Կ. Պոլիս // «Էջմիածին», 2006, Զ., էջ 4–7, 9–10։

[60] Մանրամասները տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի Հովվապետական այցելությունը Հնդկաստան // «Էջմիածին», 2008, ԺԱ., էջ 14–18։